

Հ. Գ. Մանուկան

### ԿԱՔԱՎԱԲԵՐԴԻ ՄԻՋՃՅՈՒՂԱՅԻՆ ԲԱՐԲԱՌԸ

Մեզրո: շրջանում խոսվող բարբառները ձևաբանական տեսակետից միատարր չեն: Այստեղ երկու բարբառ՝ Մեզրին և Կարճեանը, պատկանում են Ս (կամ Լիս) ճյուղին, խոսվածքների մի խումբ (Լիճք, Տաշտուն, Կալեր, Վանք և այլն) Ում ճյուղի բարբառներ են. չորս խոսվածքներ էլ. այն է՝ Վարճավար, Գուղեմանիս, Գուրիս. Աղարակ<sup>1</sup>, վերը նշվածների համեմատ գրավում են միջին դիրք, այսինքն՝ տնեն Ս (Լիս) և Ում ճյուղի բարբառների հատկանիշները:

Նշված այս չորս գյուղերը իրարից դտնվում են մեկ-երկու կիլոմետր հեռավորություն վրա և ունեն Կաքավաբերդ ընդհանուր անվանումը: Նկատի ունենալով այդ խոսվածքների ձևաբանական ընդհանրությունները և աշխարհադրական միասնական անվանումը. կարելի է այդ չորս գյուղերի խոսվածքները պայմանականորեն անվանել Կաքավաբերդի բարբառ:

Ձևաբանական այն հիմնական հատկանիշը. որով այս բարբառը միջճյուղային արժեք է ստանում, բայի սահմանական եղանակի ներկա ժամանակի կազմությունն է: Եթե Ում ճյուղի բարբառներում ներկա ժամանակը կազմվում է ում վերջավորությամբ անկատար դերբայով, իսկ Ս ճյուղի բարբառներում՝ ս վերջավորությամբ, ապա Կաքավաբերդի խոսվածքները տարբեր լծորդության բայերում համատեղում են անկատար դերբայի կազմության այդ երկու սկզբունքն էլ: Այսպես. եթե Ում ճյուղի որոշ բարբառներում ալիս վերջավորությամբ անկատար դերբայը հատուկ է միայն մի քանի բայերի (ինչպես՝ տալ-տալիս, լալ-լալիս, գալ-գալիս), ապա Կաքավաբերդի բարբառում բացի այդ ձևերից (տալիս, լելիս, կճլիս) երևույթը տարածվում է առհասարակ էլ, ալ լծորդության բայերի վրա, ինչպես՝ գնալ > նէլ-նէլիս, մրնալ-մրնալիս, երևել > իրվիլ-իրվիլիս, փալլվիլ > փիլիլիլիլ-փիլիլիլիս, խրրխրնջալ խրրխրնջալիս և այլն: Այսպիսով, Կաքավաբերդի բարբառում էլ, ալ լծորդության բայերը անկատար դերբայը կազմում են միայն ալիս և էլիս վերջավորություններով, իսկ իլ լծորդության բայերը միայն ում (ըմ) դերբայական վերջավորությամբ. ինչպես՝ դրել > դիրիլ-գիրում ըմ (գրում եմ), ուզել > ոզիլ-օզրմ ըմ (ուզում եմ), ասել > ասիլ-ասրմ ըմ (ասում եմ) և այլն:

Հատկանշական է, որ եթե Ս ճյուղի բարբառներ հանդիսացող Մեզրին և Կարճեանը ալիս և էլիս վերջավորություններից անկատար դերբայում պա-

<sup>1</sup> Այս Աղարակը չպետք է շփոթել Աղարակ արդյունաբերական ավանի հետ. որ ստեղծվել է վերջին տասնամյակի ընթացքում. և որը ոչ իր բնակչության կազմով ու լեզվով, և ոչ էլ իր աշխարհագրական տեղագրությամբ չի համընկնում Աղարակ գյուղի հետ: Վերջինս տեղավորված էր Կուրիսից հարավ՝ մի կիլոմետր հեռավորության վրա՝ ձորում: Կուրիսիստեղծությունների խոշորացման ժամանակ նրա բնակիչները մեծ մասամբ տեղափոխվեցին Մեզրի ավանը. ուր և ապրում են այժմ:

պանել են միայն ու հնչյունը (Մեղրի՝ գիրիս, մընաս, Կարճ.-գիրիս, մընայս), իսկ Կարճեանում և վերջավորությամբ ձևին զուգահեռ առկա է նաև դրա անկմամբ ձևը (գիրիլ, մընայ), որ դործածվում է օժանդակ բալից նախադաս կիրառությամբ (ինչպես՝ գիրիլ իմ, մընայ իմ, հակառակ՝ իս իմ գիրիս, իս իմ մընայս ձևերի), ապա Կաքավարերդի բարբառը լրիվ պահպանել է ալիս || էլիս վերջավորությունները (ինչպես, նէլիս իմ սղնում եմ՝ նէլ գնալ բալից, մընայիս իմ սնում եմ՝ իրվալիս ա սերևում է՝ և ալլն): Այս ինքնին նշանակում է, որ այս բարբառի անկատարի ալիս || էլիս վերջավորությունները չէին կարող առաջացած լինել Մեղրու և Կարճեանի նույն զերբայի և վերջավորությունից: Ընդհակառակը, պետք է ենթադրել, որ Կաքավարերդի բարբառի զերբայական ալիս || էլիս վերջավորությունները ներկայացնում են այն նախնական փճակը, որից զարգացել են Ս ճյուղի մի շարք բարբառների անկատարի վերջավորությունները: Այդ զարգացման մեջ, ինչպես հայտնի է, կարևոր դեր է խաղացել զերբայական վերջավորության մեջ կատարված [ > ] հնչյունափոխությունը, որը հետագայում այդ վերջավորության ամփոփման հիմքն է հանդիսացել (մընայիս > մընայիս > մընայս > մընաս): Այդ [ > ] հնչյունափոխությունը կատարվել է նաև Կաքավարերդի բարբառի Կուրիսի և Ազարակի խոսվածքներում: Այսպես, եթե վարձավարն ու Գուղեմերուն ունեն լէլիս իմ (լալիս եմ), նէլիս իմ (զնում եմ), մընայիս իմ (մնում եմ), իրվալիս ա (երևում է) ձևերը, ապա Կուրիսն ու Ազարակը համապատասխանաբար ունեն՝ լէլիս իմ, նէլիս իմ, մընայիս իմ, իրվալիս ա ձևերը:

Կաքավարերդի բարբառը անկատար զերբայի կազմությամբ տարբերվելով Ս ճյուղի բարբառներից, միաժամանակ ունի մի շարք ընդհանրություններ՝ հատկապես Մեղրու և Կարճեանի բարբառների համեմատությամբ: Ընդհանրությունները հատկապես վերաբերում են ձայնավորների ու երկարաբառների օրինաչափ փոփոխություններին: Այստեղ զործում են համարյա նույն հնչյունափոխական կանոնները: Այսպես, օրինակ՝ ա ձայնավորը միավանկ և երկվանկ բառերի սկզբին շեշտի տակ մնում է անփոփոխ՝ ազդ > ազդ, ակն > ակն, ազ > ազ, արջ > առջ, ածել > ածիլ, աղբիւր > ախպուր, աղջիկ > ախչիկ, անուն > անում, անրմ, և ալլն. շեշտից առաջ փոխվում է ը-ի (Կաքավարերդում էլ շեշտը վերջընթեր է)՝ ականամում > րկնամում, ազաման > րզաման, գաղթական > կրիտական, թաթախել > թրթախիլ և ալլն. ձայնեղ պալթականներից հետո շեշտի տակ փոխվում է ի-ի. բահ > րէհ || պէհ<sup>2</sup>, բան > րէն || պէն, բաց > րէց || պէց, գար > զէփ || կէփ, դափ > ղէփ || ուէփ, բաժինք > րէժինք || պէժինք, բակլալ > րէկլա || պէկլա, բամբակ > րէմբակ || պէմբակ, բանջար > րէնջար || պէնջար, դատարկ > ղէոտակ տէոտակ և ալլն:

Ս ձայնավորի հիմնական հնչյունափոխությունը ի է, եթե այն իս, ղ, ո, ը հնչյուններից առաջ չէ՝ եզն > իղնր, ես > իս, եփ > իփ, եփել > իփիլ, ելանել > իլիլ, թել > թիլ, թեփ > թիփ, ծեփ > ծիփ, հեշտ > հիշտ և ալլն. իսկ իս, ղ, ո, ը հնչյուններից առաջ ունի ի. արտասանությունը՝ բեոն > րէոնր || պէոնր, կեղ > կէղ, ճեղք > ճէլիկ, մեղք > մէլիկ, նեղ > նէղ, սեխ > սէխ, ցեխ > ցէխ, փեղ > փէլիկ, բերան > րէբան & պէբան, գերան > ղէբան՝ կէբան, գերմակ > ղէրմակ || կէրմակ և ալլն:

<sup>2</sup> Խոսվածքները տարբերվում են ձայնեղ պալթականների ու պալթաչփականների հնչյունափոխությունը, որի մասին կխոսվի:

||-ն ձայննդ պայթուականներից հետո ու կամ ու է՝ բուշտ բուշտ || պուշտ, բուրդ > բուրթ || պուրթ. դուլպալ > դ՛ուլրա(ք), գունդ > գ՛ունդ, գուշ > գ՛ուշ, || կ՛աշ, գունդ > գունդ, գունդ > գուրք || տուրք, ձու > ձու, ձուկն > ձուկուն || ծուկնր և այլն: Մյուս դիրքերում, ինչպես և բառասկզբում, հնչյունափոխում է օ-ի կամ օ-ի՝ ոթ > օթ, ոնել > օնիլ, ոնջ > օնջ, ուտ > հոտ, ուս > օս, ուտել > օտիլ, ու > հօ, ուրդ > օրթ, թուզ > թօզ, թուխ > թօխ, թուղթ > թօխթ, թուշ > թօշ, կուտ > կօտ և այլն:

Իս և ոյ երկրարրառոնների դիմաց ունեն ու, ինչպես ալիւր > ալուր, ագրիւր > ախպուր, արիւն > արուն, հարիւր > հարուր, ձիւն > ձուն || ծուն, սիւն > սուն, բոլթ > բոլթ || պոլթ, բոլն > բուն պուն, թոլլ > թուլ, լոլս > լուս, ծոլլ > ծուլ, հոլն > հուն և այլն, և այլն:

Իհարկե, այս հիմնական օրինաչափ փոփոխութիւններից դուրս կան և բացառութիւններ, որ հատուկ են միայն առանձին խոսվածքներին (ինչպես, օրինակ՝ մեք > Վ. Աղ. միթ, Գ. մըք. Կ. մուք. մուկն > Վ. մօկուն, Գ. Կ. Աղ. մօկնր, որթ ճհորթ > Վ. հուրթ, Գ. հօրթ Կ. Աղ. վրէրթ, ձուկն > Վ. ձուկուն, Դ. Կ. Աղ. ձուկնր և այլն). բայց հիմնական օրինաչափութեամբ կարգավարերի խոսվածքները շատ մոտ են Մեղրու և Կարճևանի բարբառներին:

Սակայն այն, ինչ ասվեց ձայնափոխների ու երկրարրառոնների փոփոխութեան մասին, այդ նույն բանը չի կարելի ասել բաղաձայնների փոփոխութեան վերաբերյալ: Իր բաղաձայնական համակարգով միայն Վարճավարի խոսվածքն է, որ անմիջապես հարում է Մեղրու և Կարճևանի բարբառներին, որոնց մեջ, ինչպես հայտնի է, գրաբարյան ձայնեղները մնում են անփոփոխ: Լ՛նգ-հակառակը՝ ձայնեղների խլացման խիստ օրինաչափ փոփոխութիւն է հանդես բերում՝ ՚նուղեմնիւր, ապա համեմատաբար՝ Ագարակն ու Կուրիսը: Ստորև բերվող բառերի շարքը ցույց է տալիս այդ երևույթը:

- Բատինք > Վ. բէտինք — Գ. Կ. Աղ. պէտինք
- բակլալ > Վ. բէկլա — Գ. Կ. Աղ. պէկլա
- բանալի > Վ. բնննն — Գ. Կ. Աղ. պիւանի
- բանջար > Վ. բէնջար — Դ. Կ. Աղ. պէնջար
- բառնալ > Վ. բէռնիլ — Գ. Կ. Աղ. պէռնիլ
- բարակ > Վ. բէրակ — Դ. Կ. Աղ. պէրակ
- բարձր > Վ. բօցուր — Գ. Կ. Աղ. պօցուր
- բրինձ > Վ. բիրինձ — Գ. Կ. Ա. պիրինձ
- ղանակ > Վ. գէնակ — Դ. Կ. Աղ. տէնակ
- ղասարկ > Վ. գէտտակ — Գ. Կ. Աղ. տէտտակ
- ղարման > Վ. գէրման — Գ. Կ. Աղ. տէրման
- ղափ > Վ. Կ. գէփ — Գ. Աղ. տէփ
- ղեղին > Վ. Կ. գէղան — Գ. Ա. տէղան
- ղուր > Վ. Կ. գուր — Դ. Աղ. տուր
- ղեղ(ք) > Վ. Կ. Աղ. գէխկ — Գ. տէխկ
- ղէգ > Վ. Կ. Աղ. գէգ — Գ. տէգ
- ղտուար > Վ. Կ. Աղ. գիժէր — Դ. տիժէր

գարուն > Վ. գէրունք — Գ. Կ. Աղ. կ՛օրունք

գետ > Վ. գէտ—Գ. Կ. Լկ. կէտ  
 գերմակ > Վ. գէրմակ—Գ. Կ. Լկ. կէրմակ  
 Գալլ > Վ. Կ. գ'ուլ—Գ. Լկ. կ'ուլ  
 գառն > Վ. Կ. գ'ոննր—Գ. Լկ. կ'ոննր  
 գինձ > Վ. Կ. գինձ—Գ. Լկ. կինձ  
 գերեզման > Վ. Կ. Լկ. գիրիզման—Գ. կիրիզման  
 գուշ > Վ. Կ. Լկ. գ'ուշ—Գ. կ'ուշ

ջուկի > Վ. ջուկիլ—Գ. Կ. Լկ. ճուկիլ, ճուկիլ  
 ջուր > Վ. ջուր—Գ. Կ. Լկ. ճուր  
 ջրաղաց > Վ. ջէղաց—Գ. Կ. Լկ. ճէղաց  
 ջորի > Վ. Կ.—ջորա—Գ. Լկ. ճորա  
 ջուխտ > Վ. Կ. ջոխտ—Գ. Լկ. ճոխտ

ձեռն > Վ. ձէք—Գ. Կ. Լկ. ծէք  
 ձի > Վ. ձի—Գ. Կ. Լկ. ծի  
 ձիգ > Վ. ձիք—Գ. Կ. Լկ. ծիք  
 ձուն > Վ. ձուն—Գ. Կ. Լկ. ծուն և ալլն:

Բերված օրինակները, իհարկե, չեն սպառում հնչյունափոխված բառերի լրիվ շարքը. բայց դրանցից էլ որոշակիորեն երևում է, որ գրաբարյան ձայնեղների դիմաց միայն Վարձավարն է, որ միշտ ունի ձայնեղ, իսկ մյուսներից Գուղեմնիսը, Բնդակառակը, ունի խույներ: Բ-ի և ձ-ի խլացման օրինաչափությամբ Վարձավարի հետ միասին բոլոր խոսվածքներն էլ հետևողական են, իսկ մյուս ձայնեղ պայթակալանների փոփոխությամբ, եթե Վարձավարն ու Գուղեմնիսը հակառակ բևեռներ են գրավում, ապա Լկաբալկն ու Կուրիսը միջին դիրք են բռնում:

Նշելի է նաև, ինչպես այդ երևում է բերված օրինակներում, — որ ձայնեղները մասնաբաժնի են անփոփոխ ոնգալիներին հետո բոլոր խոսվածքներում, նույնիսկ Գուղեմնիսում, որը շատ հետևողական է ձայնեղների խլացման տեսակետից: Ընդհակառակը, ը-ից հետո, հակառակ Լկաբալկու և Կարճևանի բարբառների, ձայնեղ պայթակալաններն ու պայթաշփակալանները շնչեղ խույ են դառնում, ինչպես՝ մարդ > մարթ, բուրդ > բուրթ | պուրթ, լեարդ > լէրթ, ուրդ > օրթ, վարդ > վարթ, որձ > ուրց, որձակ > ուրցակ «աքաղաղ» և այլն:

Լկապիսով, Կաքավարերդի խոսվածքները, եթե ձայնավորների ու երկբարբառների փոփոխությամբ հիմնականում հարում են Լկաբալկու և Կարճևանի բարբառներին, ապա բաղաձայնական համակարգով նույնը չեն. գրանցից միայն Վարձավարն է, որ մոտ է նշված բարբառներին: Ի դեպ, մի քանի ընդհանուր գործածական բառերի ընդհանրությունը նույնպես խոսում է գրանցման մոտ լինելու մասին: Լկապես, օրինակ՝ ուրք հասկացության համար Վարձավարը Լկաբալկու և Կարճևանի նման գործածում է հաք բառը (աք արմատից), մինչդեռ Գուղեմնիսը, Կուրիսը և Լկաբալկը նույն հասկացության համար օգաազործում են վրլնդ (< ուլն) բառը: Լկապես հասկացության համար Վարձավարը Լկաբալկու և Կարճևանի նման ունի մատակ բառը. մինչդեռ մյուսները գործածում են առու բառը և այլն:

Ընդհանրություններ ու տարբերություններ կան նաև քերականական կարգերում:

Կարգավարերգի բարբառում որպես հոգնակերտներ են օգտագործվում այլ (միասական բառերի համար, ինչպես, օրինակ՝ սիրտ > սէրտ — սէրտար), Ե՛ն (բաղմավանկ բառերի համար, ինչպես, օրինակ՝ հարեան > հրէվան — հրէվաննէ), ք (ձայնավորով, հիմնականում ի-ի հանդող բառերի համար, ինչպես, օրինակ՝ ածելի > ծիլի — ծիլիք): Գոյականները հիմնականում ենթարկվում են ի հոլովման, որը ընդհանուր է բոլոր հոլովումների հոգնակիի համար (ինչպես, օրինակ՝ ակն > ակնը, սեռ. ակնին, հզն. ուղղ. ակնար, սեռ. ակնէրին, բեռն > բէռնը — բէռնան — բէռնար — բէռնէրին և այլն): Ժամանակի բառերը ունեն վա, տարվա եղանակների անունները և Ե՛ր-ի հանդող մի շարք բառեր՝ ահ հոլովումները: Հատուկ անձնանունները ենթարկվում են ա հոլովման (ինչպես՝ Ջումշուգ — Ջումշուգա, Համփի — Համփիյա և այլն): Հոլովների կազմության մեջ հատկանշական է, որ սեռականը ես ընդունում է որոշիչ հոգ (ակնին լուսր օաչքի լույսը), արտին ճօնդր օարտի ծայրը և այլն), իսկ հատուկ անձնանունները, ընդհակառակը, ոչ մի հոլովում էլ որոշիչ հոգ չեն ընդունում (օրինակ՝ Ջումշուգ նէցած ա Կալէր Ե՛Ջումշուգը դնացել է Կայեր, Ջումշուգա կավը ծրնած ա Ե՛Ջումշուգի կովը ծնել է, Համփի Ջումշուգա մին թալ ցուրան ա տրվալ Ե՛Համրոն Ջումշուգին մի թալ ցորեն սովեց և այլն):

Բացառական հոլովը կազմվում է տրականից՝ Ե՛անի ետադրությունամբ (ակնին նանի օաչքից, բէռնան նանի օրեռից և այլն): Սա իր ծագմամբ ընդհանուր է Մեղրու Ե՛նից (հէնից), Կարճեանի հէնի ետադրությունների հետ, որոնք զալիս են գրարարյան ա ներգրական հոլովման և ցուցական դերանունների բացառականի ա՛նե (յաղջկանե, ի մանկանե, յայսմանե և այլն) վերջավորությունից: Կարգավարերգի խոսվածքներում այդ վերջավորությունից առաջ ավելացել է Ե՛ տրականի որոշիչ հոգի ազդեցությամբ: Գործիական հոլովը ունի ալ, ներդրականը՝ ում վերջավորություններ:

Սոնարհման համակարգում, ի տարբերություն Մեղրու և Կարճեանի բարբառների, կա երեք տիպի խոնարհում: Եթե Կարճեանի բարբառը իլ լծորդություն պարզ բայերում տարբերում է երկու խոնարհումներ՝ ըստ շեշտի վերջընթերությունն և վերջին վանկում լինելու հատկանիշների (ինչպես, օրինակ քերել > քիրիլ, իմել > իրմիլ, անկ. գրբ. քիրիս || քիրիլ, խրմիս || խրմիլ, հրկ. գրբ. քիրած, խրմրէժ, կատ. քիրալ, խրմրէլ, հրամ. եղ. քիրա, խրմէ՛), իսկ Մեղրու բարբառը դրանք տարբերակում է լծորդություններով ու շեշտով (ինչպես՝ քիրիլ, խրմէլ, անկ. գրբ. քիրիս, խրմէս, հրկ. գրբ. քիրած, խրմած, կատ. քիրալ, խրմալ, հրամ. քիրս կամ քիրէ՛ր, խրմէ՛ր), ապա Կարգավարերգի բարբառը այդ երկուսը միավորում է մի խոնարհման մեջ և ոչ մի տարբերություն հանդես չի բերում ժամանակալին ձևերում, բացառությամբ իհարկե, ներկա և անցյալ անկատար ժամանակների, որոնցով և նա դառնում է միջնուղալին բարբառ (այսպես՝ քիրիլ, խրմիլ, անկ. քիրրմ, խրմում, հրկ. քիրած, խրմած, կատ. քիրալ, խրմալ, հրամ. քիրա, խրմա):

Այլ լծորդության բայերը երեք բարբառներում էլ ունեն ուրույն խոնարհում, բայց իրենց ընդհանրություններով հանդերձ՝ ունեն նաև տարբերություններ, որ երևում է հետևյալ համեմատությունից: Վերցնենք երկու բալ երեւիմ > իրվալ և մնալ > մրնալ:

Մեղրի	Կարճեան	Կարձալարերդ
անկ. զբր. իրվաս մրնաս	իրվաս իրվան մրնաս ը մրնալ	իրվանիս    իրվանիս մրնալիս մրնալիս
կատ. զբր. իրվացալ մրնացալ	իրվահալ մրնահալ	իրվանցան մրնացալ
Հարկ. զբր. իրվահած մրնահած	իրվահած մրնահած	իրվացած մրնացած
Հրամ. եղ. իրվա ց - իրվանց էք մրնաց - մրնացէք	իրվանց-իրվա ցիք մնաց-մրնացիք	իրվանց-իրվանցիք մրնաց-մրնացիք

Զխոսելով անկատար զերբայի տարբերությունների մասին (այդ առթիվ խոսք է եղել վերը), դիտենք մյուս ձևերի համապատասխանությունները: Կաքավարերդի բարբառում ցոլական հիմքի ց-ն մնացել է անփոփոխ, մինչդեռ Մեղրու բարբառի հարակատար զերբայում այն փոխվել է կ-ի, իսկ Կարճեանի լարբառում այդ երևույթը բացի հարակատար զերբայից տարածվել է նաև կատարյալ զերբայի վրա: Մեղրու բարբառը կարծես թե անցման օղակ է շանդիսանում Կաքավարերդի ձևերից զեպի Կարճեանի բարբառի ձևերը:

Կարճեանի բարբառը ան և էն սոսկածանց ունեցող բայերի խոնարհումը տարբերակում է. ախպես, օրինակ՝ վերցնենք լուանալ > լիվանիլ, բարձրանալ > բիձրէնիլ բայերը. սրանց կատարյալ և հարակատար զերբայներն են լիվանալ, բիձրիլալ, լիվահած, բիձրիլած, ուր էն սոսկածանց ունեցող բայը կորցրել է ցոլական հիմքի հատկանիշը: Մեղրու բարբառը այդ երկու տիպի բայերի խոնարհումը չի տարբերում (կատ. լիվացալ, բիձրէլցալ, հարկ. լիվահած, բիձրէհած) և նշված զերբայներում կիրառում է ալ լծորդություն բայերին հատուկ վերջավորություններ: Կաքավարերդի բարբառը նույնպես նշված զերբայներում շանդես է բերում իբր ալ խոնարհման հատկանիշները (կատար. լիվանցալ, բիցրացալ պիցրացալ, հրետ. լիվացան, բիցրացած || պիցրացած): Նշված առանձնահատկություններիով Կաքավարերդի բարբառը ավելի մոտ է կանգնած Մեղրու, քան Կարճեանի բարբառին:

Ապառնի զերբայի կազմությամբ Կաքավարերդի բարբառը արմատապես տարբերվում է Մեղրու և Կարճեանի բարբառներից: Եթե վերջիններս այդ զերբայը կազմում են անորոշ զերբայի վրա ավելացնելով -ացուել, -ասկան, Կարճեանը նաև -ացկուել վերջավորությունները (ինչպես, օրինակ՝ աղալ > աղիլ-բղրլացուել, բղրլասկան, Կարճեանը նաև՝ ըղրլացկուն), ապա Կաքավարերդը նույն զերբայը կազմում է -ալու, -ելու վերջավորություններով. որոնք ավելանում են բայարմատի վրա (ինչպես՝ ըռելու, մընալու): Այդ վերջավորությունները օժանդակ բայի ձայնավորից առաջ վերջում ստանում են վ (ու-ի աղղկությունը)՝ ալուվ, էլուվ) ինչպես՝ ըղէլուվ բմ, մրնալուվ բս և այլն: Եթե այսպես ալ առանձնահատկությամբ ևս Կաքավարերդը սահմանադրատվում է Մեղրու և Կարճեանի բարբառներից:

Սակայն բայի համակարգում կան և սկզբունքային ընդհանրություններ. ախպես, օրինակ՝ Կաքավարերդի խոսվածքները ևս չեն պահպանել օժանդակ բայի անցյալի ձևերը. դրանց քերականական իմաստը արտահայտվում է այդ բայի ներկայի ձևերի և լալ բառի հորադրությամբ (ինչպես՝ իմ լալ, իս լան, ա լալ, իք լալ, ին լան): Այդ լալ բառը համապարհ է Մեղրու բարբառի լա, Կար-

ճևանի բարբառի լի բառերին, որոնք ժողովում են հայերենի լինիմ բայի անցյալ զերբայի լեալ ձևից: Բացակայում է նաև օժանդակ բայի հոգնակի երկրորդ զեմքը, կամ այնպիսի ճիշտ՝ հոգնակիում բայական ստաջին ու երկրորդ զեմքերն արտահայտվում են նույն ձևով (լիք)՝ որը արդյունք է առաջին զեմքում մ-ի անկման (ևմք > ևս > ևս) և երկրորդ զեմքի հետ նույնանալուն (եք > եք):

Կաթավարերգի խոսվածքները ևս չունեն վաղակառարի ձևեր. բայի վաղակատարությունն արտահայտվում է հարակատար զերբայով կազմված ժամանակային ձևերով, որոնք միավանակ արտահայտում են նաև հարակատարություն, ինչպես, օրինակ՝ ասած ըմ (ասեկ եմ, ասած եմ), մրևացած ըս (մընացել ես, մնացած ես) և այլն:

Կաթավարերգի խոսվածքները մյուսների նման չունեն նաև անցյալ կատարյալ ժամանակի պարզ ձևեր. դրանց քերականական իմաստը արտահայտվում է կատարյալ (զրարարյան՝ անցյալ, որից և մեր դրական լեզվի վաղակառար) զերբայով կազմված ժամանակային ձևերով. ինչպես՝ ասալ բմ (ասացի), մրևացալ ոս (մընացիր) և այլն: Սահմանական եղանակի բոլոր ժամանակներն էլ կազմվում են զերբայներով ու օժանդակ բայով, ինչպես, օրինակ ներկա՝ սարմ ըմ, մընալիս մընալիս իմ, անց անկ. սարմ բմ լալ, մընալիս ॥ մընալիս իմ լալ. ասլառնի՝ բեկլով բմ, մընալով բմ, անց. ասլառ. բեկլով ըմ լալ. մընալով բմ լալ. Դարակլ. վաղակլ. սասած բմ, մընացած բմ, անց. Կարակլ. վաղակլ. սասած բմ լալ, մընացած բմ լալ. անց. կատար.՝ ասալ բմ, մընացալ բմ: Պարմանական եղանակի ժամանակները կազմվում են անորոշ զերբայով ու օժանդակ բայով. ինչպես՝ ասիլ իմ (կասեմ), մընալ բմ (կմնամ) և այլն:

Ինչպես ցույց են տալիս համեմատվող փաստերը, բնդհանրություններն այնպիսի շատ են, քան տարբերությունները: Վերջիններս հիմնականում արտահայտվում են բաղաձայնական համակարգում և քերականական իմաստների արահայտման մի քանի ձևերում:

Բաղաձայնական համակարգում Կուղեմնիսի, Կուրիսի և Լկարակի խոսվածքներում ձայնեղ պայթականների ու պայթաշփականների խլացման երկփոխները, մեր կարծիքով, ոչ շրջանի արտահայտություններ են, այլ ինչքն՝ նրանք Մեղրու, Կարճևանի բարբառների ու Վարճավարի խոսվածքի նման նախապես ունեցել են եռաստիճան անտեղաշարժ բաղաձայնական համակարգ: Լկղ ենթադրությունը հաստատվում է հատկապես ա և ու ձայնավորների շեշտի տակ կրած զիրբային օրինաչափ փոփոխությամբ: Եռաստիճան անտեղաշարժ բաղաձայնական համակարգ ունեցող Մեղրու և Կարճևանի բարբառներում, ինչպես նաև Վարճավարի խոսվածքում, ա և, ու > ու հնչյունափոխությունը տեղի է ունենում ձայնեղ պայթականներից ու պայթաշփականներից հետո, ինչպես՝ բան > բն, բանջար > բնջար, բարակ > բերակ, դանակ > դենակ, դարման > դերման. գուր > գուր, բուրդ > բուրդ (Վարճ. բուրթ). ջուր > ջուր և այլն, և այլն. միսչեսո խուրիից հետո այլ փոփոխությունն օրինաչափ չէ. ինչպես՝ պաս > պաս, պանիր > պանիր, կար > կար, կախ > կախ, տալ > տալ, տակ > տակ, պոկ > պոկ, կուտ > կուտ, կուրծ > կործ, տուն > տուն և այլն: Եուղեմնիսի, Կուրիսի և Լկարակի խոսվածքներում զրարարյան խուրիից հետո՝ որոնք խոսվածքներում նույնպես խուլ են, ունեն նույն հնչյունափոխական օրինաչափությունը, ինչ որ վերոհիշյալ բարբառներում. սակայն այլ է

Նրանց որակը գրաբարյան ձայնեղներից առաջացած խուլերից հետո. այդ դիրքում նրանք ունեն նույն ա՛.ե. ու՛.ո՛ հնչյունափոխությունը. ինչպես բան՝ պէ՛ն. բանջար՝ պէ՛նջար, բարակ՝ պէ՛րակ, դանակ՝ տէ՛նակ, դարման՝ տէ՛րման. դուր՝ տուր, բուրդ՝ պարժ, ջուր՝ ճուր և այլն: Իժվար չէ կոահել, որ ա՛.ե. ու՛.ո՛ հնչյունափոխությունը այս խոսվածքներում խուլերի պատճառով չէ. որ կատարվել է, քանի որ գրաբարյան խուլերից հետո, ինչպես տեսանք, այդ երևույթը տեղի չի ունեցել: Հետևաբար, պետք է եղրակացնել, որ այդ խոսվածքներն էլ նախապես ունեցել են եռաստիճան անտեղաշարժ բաղաձայնական համակարգ և այդ վիճակում են ձայնեղներից հետո կատարել ա՛.ե. ու՛.ո՛ հնչյունափոխությունը. իսկ ձայնեղների խլացումը դրան հաջորդել է հետագայում: Այսպիսով, բաղաձայնական համակարգի այն տարրերությունները, որ ներկայացնում են այսօր Կաքավարերդի խոսվածքները, ուշ շրջանի արտահայտություններն են. մի ժամանակ նրանք եղել են միասնական ու նման Մեղրու և Կարճևանի բարբառներին:

Իրենց ձևաբանական առանձնահատկություններով Կաքավարերդի խոսվածքները ավելի շատ ընդհանրություններ ունեն Ս ճյուղի բարբառների՝ Մեղրու և Կարճևանի հետ: Հիմնական տարբերությունները հանդես են գալիս բայական համակարգի մի քանի ձևերում, այն է՝ խոնարհման տիպերում, ուր Կաքավարերդը ունի ավելի նախնական վիճակ և, ընդհանրապես, անհամեմատ ավելի պարզ ու միօրինակ համակարգ. ըստ որում Մեղրու յարբառը անցման սղակ է հանդիսանում ղեպի Կարճևանի բարբառը: Տարբերություններն ավելի խիստ են անկատար և ապառնի ղերբայների կազմության մեջ: Առաջինում էլ և ալ լծորդության բայերում Ս ճյուղի նախնական ձևերի պահպանումը ենթադրել է տալիս, որ այս խոսվածքները իրենց բոլոր բայական լծորդություններով անկատար ղերբայում ունեցել են ալիս, էլիս վերջավորություններ, բայց հետագայում, Ում ճյուղի բարբառների ազդեցությամբ, իլ լծորդության բայերի անկատար ղերբայը դարձել է ում: Առհասարակ հնչյունական, ձևաբանական, շարահյուսական, բառային կազմի ընդհանրությունները ենթադրել են տալիս. որ այս խոսվածքները Ս ճյուղի ներկայացուցիչներ են եղել. - ուստի և ապառնի ղերբայի կազմության սկզբունքն էլ ներմուծություն է ալլ բարբառից:

Մական, չնայած այս բոլորին, հալ բարբառների ձևաբանական դասակարգման ընդունված սկզբունքով, Կաքավարերդի խոսվածքները միջճյուղային դիրք են գրավում ունենալով և՛ Ս, և՛ Ում ճյուղի հատկանիշներ, որոնց մեջ, սակայն, գերակշռում են Ս ճյուղի բարբառներին, հատկապես Մեղրու և Կարճևանի բարբառներին հատուկ հատկանիշները: